|-------|--|---|---|--|---|--------------|----|----|----|--|--|-----|
|       |  | <p>դ. «բիզնես» գործընթացների օպտիմալացման և վերակառուցման առաջարկների ներկայացում,</p> <p>ե. ՊԵԿ կողմից «բիզնես» գործընթացների վերակառուցման նպատակահարմարության գնահատում, անհրաժեշտ միջոցառումների նախաձեռնում,</p> <p>զ. ՊԵԿ ստորաբաժանումների գործառույթները սահմանող իրավական ակտերի ուսումնասիրություն և համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացում (ըստ անհրաժեշտության):</p> |   |  |   |              |    |    |    |  |  |     |
| 1.2.2 | <p>ՊԵԿ աշխատանքներում ներդնել նախագծերի կառավարման սկզբունքների արդյունավետ կիրառման կառուցակարգեր</p> | <p>ա. նպատակային հարկային մարմնի նախագծի կազմում, աշխատանքի գնահատականների որոշում,</p> <p>բ. նպատակային հարկային մարմնի աշխատակազմի ձևավորում, պիլոտային գործարկում,</p> <p>գ. աշխատանքի գնահատում, հաշվետվության կազմում,</p> <p>դ. նպատակային հարկային մարմնի կոնցեպտի կիրառում ՊԵԿ ընթացակարգերում:</p>   | <p>ՊԵԿ աշխատանքներում ներդրված են նախագծերի կառավարման արդյունավետ սկզբունքներ:</p> | <p>ՊԵԿ կողմից իրականացվող գործընթացներում ներդրվել է «նպատակային» հարկային մարմնի սկզբունքը:</p> | 0 | 31.12.2024թ. | 50 | 40 | 30 |  |  | 120 |
| 1.2.3 | <p>Ներմուծել ՊԵԿ տեղեկատվական համակարգերի պարբերական</p>   | <p>ա. համապատասխան հավաստագիր ունեցող կազմակերպության ընտրություն,</p>  | <p>ՊԵԿ տեղեկատվական համակարգերի անվտանգության</p>                                   | <p>ՊԵԿ-ը ստացել է ներկայումս արդի ISO միջազգային ստանդարտի հավաստագիրը:</p>                      | 0 | 31.12.2024թ. | -  | 15 |    |  |  | 15  |

|   |  |  |  |   |      |              |     |       |     |     |     |       |     |  |  |
|---|--|--|--|---|------|--------------|-----|-------|-----|-----|-----|-------|-----|--|--|
|   | տեխնիկական առողիտի անցկացման և անվտանգության հավաստման կառուցակարգեր   | բ. ընտրված կազմակերպության կողմից իրականացրած նախնական տեխնիկական առողիտի արդյունքում հայտնաբերված թերությունների վերացում,<br>գ. ՊԵԿ-ում համապատասխան տեխնիկական առողիտի իրականացում,<br>դ. ստանդարտից «շեղումների վերլուծություն» (gap analysis) հաշվետվության կազմում:  | մակարդակը բերված է:  | Ներկայումս առկա է ISO/IEC 27001:2013 ստանդարտի հավաստագիրը:   |      |              |     |       |     |     |     |       |     |  |  |
| Ընդամենը 28 գործողություն   |  |  |  |   |      |              | 875 | 2,342 | 720 | 245 | 130 | 4,312 |     |  |  |
| ԶՌ-Ն 2. Վարչարարության արդյունավետության բարձրացում, եկամուտների ավելացում, ստվերի կրճատում |  |  |  |   |      |              |     |       |     |     |     |       |     |  |  |
| 2.1.1   | Հզորացնել հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կարողությունները՝ ռիսկերի շրջանակի ընդլայնմամբ և դրանց բացահայտման վերլուծական մեխանիզմների ավտոմատացմամբ՝ նվազեցնելով մարդկային գործունի ազդեցությունը | ա. այլ երկրների փորձի ուսումնասիրություն,<br>բ. հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի գործող չափանիշների վերանայման և նոր չափանիշների ներդրման նպատակահարմարության որոշում,<br>գ. տեխնիկական նկարագրի կազմում,<br>դ. գնման գործընթացի կազմակերպում,<br>ե. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում,<br>զ. համակարգի մշակում, ծրագրավորում,<br>է. համակարգի պիլոտային շահագործում,<br>ը. համակարգի հանձնում շահագործման: | Հարկային կարգապահության ռիսկերի կառավարման համակարգի կարողությունները ընդլայնվել են: Ռիսկերի վերլուծության մեխանիզմները ավտոմատացված են: | Ռիսկերի կառավարման համակարգում օրական մշակվում է առավելագույն 200.000 տեղեկատվական տողերի քանակ: Ներկայումս օրական մշակվում է 100.000 տեղեկատվական տող: | -20% | 31.12.2024թ. | 20  | 40    | 40  |     |     |       | 100 |  |  |

|              |   |  |  |   |             |                     |          |            |            |            |            |            |            |
|--------------|---|--|--|---|-------------|---------------------|----------|------------|------------|------------|------------|------------|------------|
| <p>2.1.2</p> | <p>Կատարելագործել մաքսային ավտոմատացված տեղեկատվական համակարգում ռիսկերի կառավարման մեխանիզմները՝ ռիսկերի կառավարման «խելացի» համակարգի ներդրմամբ</p> | <p>ա. մաքսային ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման մասով պահանջների սահմանում,<br/>բ. մաքսային ոլորտում ռիսկերի կառավարման համաշխարհային նորագույն փորձի ուսումնասիրում և համապատասխան գործիքակազմի մշակում,<br/>գ. արհեստական բանականության և մեքենայական ուսուցման մոտեցումների կիրառման հնարավորության ուսումնասիրություն ռիսկերի կառավարման ընթացքում,<br/>դ. ռիսկերի կառավարման «խելացի» համակարգի ներդրման հայեցակարգի մշակում,<br/>ե. տեխնիկական նկարագրի կազմում,<br/>զ. տեխնիկական նկարագրի ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին և ԹՎայնացման խորհրդին,<br/>է. գնման գործընթացի կազմակերպում,<br/>ը. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում,<br/>թ. համակարգի մշակում, ծրագրավորում,<br/>ժ. համակարգի պիլոտային շահագործում,</p> | <p>Մաքսային ավտոմատացված տեղեկատվական համակարգում ռիսկերի կառավարման մեխանիզմները կատարելագործված են:<br/>Ներդրված է ռիսկերի կառավարման «խելացի» համակարգ:</p> | <p>Ռիսկային գործոնների թիրախավորման ճշգրտության բարձրացման միջոցով գնման ղեկավարի նվազում մինչև 5%:</p> | <p>-20%</p> | <p>31.12.2025թ.</p> | <p>-</p> | <p>100</p> | <p>100</p> | <p>100</p> | <p>100</p> | <p>100</p> | <p>400</p> |
|--------------|---|--|--|---|-------------|---------------------|----------|------------|------------|------------|------------|------------|------------|



|       |   |   |   |   |      |  |              |     |     |     |         |         |     |
|-------|---|---|---|---|------|--|--------------|-----|-----|-----|---------|---------|-----|
|       |   | ժա. համակարգի հանձնում շահագործման:   |   |   |      |  |              |     |     |     |         |         |     |
| 2.1.3 | Կատարելագործել և ընդլայնել ՊԵԿ տեղեկատվական համակարգերում առկա՝ գործարքները հավաստող փաստաթղթերի, հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և այլ տեղեկատվության վերլուծության հիման վրա ռիսկային չափանիշներով հարկ վճարողների գնահատման և ինքնաշխատ ծանուցման համակարգը | ա. հարկ վճարողների ռիսկայնության գնահատման նոր չափանիշների մշակում և ծրագրավորում,<br><br>բ. ռիսկայնության գնահատման նոր չափանիշների հիման վրա ռիսկային հարկ վճարողներին էլեկտրոնային ծանուցումների ուղարկում:  | Հարկ վճարողների գնահատման և ինքնաշխատ ծանուցման համակարգը կատարելագործված է: Հարկ վճարողների ռիսկայնության գնահատման չափանիշներն ընդլայնված են: | ա. Ռիսկային չափանիշների ավելացում՝ դրանց թիվը հասցնելով առնվազն 61-ի: Ներկայումս ծանուցումներ ուղարկվում են ռիսկային 16 չափանիշների գծով:<br><br>բ. Ռիսկային չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ վճարողների շրջանակի ընդլայնում՝ գործող հարկ վճարողների մեջ ծանուցված հարկ վճարողների տեսակարար կշիռը 13%-ից բարձրացնելով 30%-ի: | 0    |  | 31.12.2025թ. | 5   | 10  | 10  |         | 25      |     |
| 2.1.4 | Մաքսային գործառնությունների պարզեցմամբ՝ ապահովել մաքսային հսկողության առավել արագ և դյուրին իրականացումը  | ա. տնտեսվարողներին առցանց, ավելի դյուրին նախնական հայտարարագրման հնարավորություն ապահովելու նպատակով՝ նախնական հայտարարագրման համակարգի կատարելագործում: Կատարելագործված նախնական հայտարարագրման համակարգի կիրառմամբ հնարավոր կլինի իրականացնել ապրանքների բացթողում ապրանքների ՀՀ պետական սահմանը հատելուց հետո՝ | Մաքսային գործառնությունները պարզեցվել են:   | Կրճատվել են ապրանքների բացթողման համար ծախսվող ժամանակը և ֆինանսական ռեսուրսները 10-ական տոկոսով:   | -20% |  | 31.12.2025թ. | 100 | 100 | 100 | 10<br>0 | 10<br>0 | 500 |

|  |  |   |  |  |  |  |  |  |  |
|--|--|---|--|--|--|--|--|--|--|
|  |  | <p>սահմանային մաքսային մարմնում,</p>  |  |  |  |  |  |  |  |
|  |  | <p>բ. բանակցել ԵԱՏՄ անդամ մյուս երկրների հետ՝ ԵԱՏՄ շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերում և օրենսդրական ակտերում համապատասխան փոփոխություններ իրականացնելու նպատակով,</p>   |  |  |  |  |  |  |  |
|  |  | <p>գ. նախնական հայտարարագրման գործընթացն ավելի գրավիչ դարձնելու նպատակով մաքսային վճարների վճարման հետաձգման մեխանիզմի ներդրում,</p>  |  |  |  |  |  |  |  |
|  |  | <p>դ. ՀՄԿ-ի առաջարկած «Ապրանքների բացթողման ժամանակատարության վերլուծություն» (Time Release Study) գործիքի կիրառում, որը նախատեսված է ապրանքների ժամանման պահից մինչև դրանց բացթողումը ծախսված ժամանակի հաշվարկման համար,</p> |  |  |  |  |  |  |  |
|  |  | <p>ե. օրինակելի ԱՏԳ իրականացնող անձանց արտոնությունների տրամադրման նպատակով՝ բարելիսիզ տնտեսավարողների գնահատման համակարգի ներդրում,</p>  |  |  |  |  |  |  |  |
|  |  | <p>զ. իրականացնել աշխատանքներ անհրաժեշտ</p>   |  |  |  |  |  |  |  |



|       |  |   |  |  |      |              |   |   |   |   |   |   |    |  |  |
|-------|--|---|--|--|------|--------------|---|---|---|---|---|---|----|--|--|
|       |  | <p>խորհրդին և ԹՎայնացման խորհրդին,</p> <p>ե. գնման գործընթացի կազմակերպում,</p> <p>զ. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում,</p> <p>է. համակարգի մշակում, ծրագրավորում,</p> <p>ը. համակարգի պիլոտային շահագործում,</p> <p>թ. համակարգի հանձնում շահագործման,</p> <p>ժ. համակարգի աշխատանքի մոնիթորինգ և վերահսկում:</p>  |  |  |      |              |   |   |   |   |   |   |    |  |  |
|       |  |   |  | Շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից ապահովվող եկամուտների աճ՝ առնվազն 20 տոկոսով: | -30% |              |   |   |   |   |   |   |    |  |  |
| 2.1.6 | Ինտեգրել փոստային առաքանիների հաշվառման համակարգը ռիսկերի կառավարման ավտոմատացված համակարգին և Միջազգային փոստային միության համակարգին (International Postal System/ Customs Declaration System) | <p>ա. IPS/CDS համակարգի քիզնես գործընթացների և տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրություն,</p> <p>բ. փոստային առաքանիների հաշվառման գործող համակարգի փորձաքննություն՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով,</p> <p>գ. փոստային առաքանիների հաշվառման համակարգի վրա ազդեցությունների գնահատում, համապատասխան փոփոխություններ իրականացնելու տեխնիկական առաջադրանքի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և</p> | Փոստային առաքանիների հաշվառման համակարգն ինտեգրվել է ռիսկերի կառավարման ավտոմատացված համակարգին և Միջազգային փոստային միության համակարգին: | Կրճատվել է փոստային առաքանիների մաքսային հսկողության ժամանակը առնվազն 50 տոկոսով:  | -20% | 31.12.2025թ. | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 30 |  |  |

|       |   |  |  |  |     |              |   |    |  |  |  |  |    |
|-------|---|--|--|--|-----|--------------|---|----|--|--|--|--|----|
|       |   | կատարելագործման խորհրդին,<br>դ. համակարգի մշակում,<br>ե. համակարգի փորձարկում և ներդրում:  |  |  |     |              |   |    |  |  |  |  |    |
| 2.1.7 | Ներդնել Ուղևորների նախնական տեղեկատվության (API) և Ուղևորների տվյալների գրանցման (PNR) համակարգեր և ինտեգրել դրանք մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի հետ | ա. Ուղևորների նախնական տեղեկատվության (API) և Ուղևորների տվյալների գրանցման (PNR) համակարգերի կիրառման միջազգային փորձի ուսումնասիրում,<br>բ. Ուղևորների նախնական տեղեկատվության (API) և Ուղևորների տվյալների գրանցման (PNR) համակարգերի ներդրման և կիրառման հետ կապված թիզնես գործընթացների ուսումնասիրում,<br>գ. տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրություն և տեխնիկական պահանջների սահմանում,<br>դ. իրավական դաշտի ուսումնասիրում և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխությունների առաջարկությունների ներկայացում,<br>ե. Հայաստանի Հանրապետությունում Ուղևորների նախնական տեղեկատվության (ՈՒՆՏ/API) համակարգի ներդրման տեխնիկական առաջադրանքի մշակմանը մասնակցություն և | Ուղևորների նախնական տեղեկատվության և ուղևորների տվյալների գրանցման համակարգերը ներդրված են և ինտեգրվել են մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերին: | Օդային տրանսպորտային միջոցով տեղափոխվող՝ արգելված ապրանքների տեղափոխման մեջ կասկածվող անձանց բացահայտումների քանակն ավելացել է առնվազն 20 տոկոսով: | -5% | 31.12.2025թ. | - | 35 |  |  |  |  | 35 |

|       |   |  |   |   |      |              |     |    |    |    |  |     |
|-------|---|--|---|---|------|--------------|-----|----|----|----|--|-----|
|       |   | <p>համապատասխան տեխնիկական պահանջների ներկայացում,</p> <p>զ. API և PNR համակարգերի՝ մաքսային մարմնի տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման համար տեխնիկական առաջադրանքի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին,</p> <p>է. համակարգերի մշակման գործընթացին մասնակցություն,</p> <p>ը. համակարգերի փորձարկում և ներդրում:</p>   |   |   |      |              |     |    |    |    |  |     |
| 2.1.8 | Ներդնել ԵԱՏՄ շրջանակներում ապրանքների հետագծելիության ապահովման մեխանիզմ՝ ԵԱՏՄ հարթակում ստանձնած պարտավորություններին համապատասխան | <p>ա. նախագծի հայեցակարգի մշակում ԵԱՏՄ անդամ-պետությունների հետ,</p> <p>բ. ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից նորմատիվ-իրավական ակտերի մշակում և հաստատում,</p> <p>գ. տեխնիկական նկարագրի կազմում,</p> <p>դ. նախագծի իրականացմամբ պայմանավորված՝ մաքսային և հարակից այլ ընթացակարգերի ուսումնասիրություն և հնարավորության դեպքում բիզնես գործընթացների վերակառուցում (օպտիմալացում),</p> | ԵԱՏՄ շրջանակներում ապրանքների հետագծելիության ապահովման մեխանիզմը ներդրված է: | Անբարեխիղճ ԱՏԳ մասնակիցների քանակը նվազել է առնվազն 30 տոկոսով: | -30% | 31.12.2024թ. | 100 | 50 | 75 | 75 |  | 300 |

|        |   |   |  |   |      |              |   |   |   |   |  |  |   |
|--------|---|---|--|---|------|--------------|---|---|---|---|--|--|---|
|        |   | <p>ե. տեխնիկական նկարագրի ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին և ԹՎայնացման խորհուրդ,</p> <p>զ. գնման գործընթացի կազմակերպում,</p> <p>է. տեխնիկական առաջադրանքի կազմում,</p> <p>ը. համակարգի մշակում, ծրագրավորում,</p> <p>թ. համակարգի պիլոտային շահագործում,</p> <p>ժ. համակարգի հանձնում շահագործման:</p>          |  |   |      |              |   |   |   |   |  |  |   |
| 2.1.9  | Մշակել և ներդնել ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագիր, իրականացնել ծրագրի մոնիտորինգ և, ըստ անհրաժեշտության, վերանայել ծրագիրը | <p>ա. ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագրի (ծրագրերի) մշակում և ներդրում,</p> <p>բ. ոլորտային հարկային կարգապահության բարելավման ծրագրի (ծրագրերի) մոնիտորինգի իրականացում,</p> <p>գ. իրականացված մոնիտորինգի արդյունքներով ծրագրի (ծրագրերի) վերանայման վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, առաջարկությունների ներկայացում և հետագա ընթացքի ապահովում:</p> | Իրականացվել է առնվազն 1 հարկային կարգապահության բարելավման ծրագիր: | Ընտրված հարկ վճարողների խմբում նվազել է բարձր ռիսկային հարկ վճարողների քանակը առնվազն 20 տոկոսով: | -20% | 31.12.2022թ. | 0 | 0 |   |   |  |  | 0 |
| 2.1.10 | Ստեղծել պետական տուրքի  | ա. օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ  | Օրենսդրական համապատասխան փոփոխությունները                          | Տարեկան կտրվածքով իրականացվել են թեմատիկ ստուգումներ՝ պետական                                     | 0    | 31.12.2024թ. | 0 | 0 | 0 | 0 |  |  | 0 |

|               |  |   |  |   |             |                     |          |           |           |           |           |            |
|---------------|--|---|--|---|-------------|---------------------|----------|-----------|-----------|-----------|-----------|------------|
|               | <p>վերահսկողության գործուն համակարգ</p>  | <p>առաջարկությունների ձևավորում,</p> <p>բ. օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ փաթեթի մշակում և քննարկում լիազոր մարմինների հետ,</p> <p>գ. օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո՝ հարկային մարմնում պետական տուրքի հսկողություն սահմանող կառուցվածքային միավորի ձևավորում,</p> <p>դ. պետական տուրքի վերահսկողության գծով՝ հարկային մարմնի ներքին ընթացակարգերի սահմանում:</p>         | <p>կատարված են: Ստեղծվել է պետական տուրքի վերահսկողության արդյունավետ համակարգ:</p>  | <p>տուրք գանձող առնվազն թվով 5 մարմիններում:</p>  |             |                     |          |           |           |           |           |            |
| <p>2.1.11</p> | <p>Կատարելագործել մաքսային ավտոմատացված տեղեկատվական համակարգում ռիսկերի կառավարման մեխանիզմները՝ ներդնելով ֆիզիկական անձանց և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ռիսկերի կառավարման ավտոմատ համակարգ</p> | <p>ա. նախագծի պահանջների սահմանում,</p> <p>բ. համագործակցություն ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ՝ ՄԷԿՏ համակարգում Մաքսային ռիսկերի կառավարման համակարգի ներդրման գործընթացի ուղղությամբ,</p> <p>գ. մաքսային ոլորտում ռիսկերի կառավարման համաշխարհային նորագույն փորձի ուսումնասիրում և համապատասխան գործիքակազմի մշակում,</p> <p>դ. տեխնիկական պահանջների սահմանում և մոդելավորում,</p> | <p>Ֆիզիկական անձանց և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մաքսային ռիսկերի կառավարման ավտոմատ համակարգը ներդրված է:</p> | <p>Կրճատվել է ոչ ռիսկային հանդիսացող ֆիզիկական անձանց և անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների սահմանահատման գործընթացի ժամանակը՝ առնվազն 50 տոկոսով:</p> | <p>-10%</p> | <p>31.12.2025թ.</p> | <p>-</p> | <p>50</p> | <p>50</p> | <p>40</p> | <p>30</p> | <p>170</p> |



|        |  |   |   |   |      |              |   |    |   |   |   |   |    |
|--------|--|---|---|---|------|--------------|---|----|---|---|---|---|----|
|        |  | ե. տեխնիկական նկարագրի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին,<br>զ. համակարգի մշակում,<br>է. համակարգի փորձարկում և ներդրում:  |   |   |      |              |   |    |   |   |   |   |    |
| 2.1.12 | «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» հարթակում ներդնել «Տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագիր» համակարգը | ա. նախագծի պահանջների սահմանում,<br>բ. տեխնիկական նկարագրի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին,<br>զ. համակարգի մշակում,<br>դ. համակարգի փորձարկում և ներդրում:  | «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» հարթակում ներդրված է «Տրանսպորտային միջոցների մաքսային հայտարարագիր» համակարգը: Իրականացվում է թիրախավորված մաքսային հսկողություն: | ՀՀ տարածք մուտք գործող դատարկ տրանսպորտային միջոցների կառուցվածքում մաքսային հսկողությունից թաքցված ապրանքների հայտնաբերման դեպքերի քանակն ավելացել է առնվազն 20 տոկոսով: | -5%  | 31.12.2025թ. | - | 80 |   |   |   |   | 80 |
| 2.1.13 | Կատարելագործել էլեկտրոնային առևտրի հարկային հսկողության մեխանիզմները, ՊԵԿ կարողությունները                           | ա. օրենսդրական կարգավորումների ուսումնասիրում և, ըստ անհրաժեշտության, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ձևավորում և հետագա ընթացքի ապահովում,<br>բ. էլեկտրոնային առևտրի հսկողություն իրականացնող հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձրացում, | Էլեկտրոնային առևտրի հարկային հսկողության գործընթացում ՊԵԿ կարողություններն ընդլայնվել են:   | Էլեկտրոնային առևտրով զբաղվող՝ հարկային մարմնում չգրանցված ձեռնարկատիրական գործունեության դեպքերի բացահայտումների քանակի աճ՝ առնվազն 15 տոկոսով:                           | -20% | 31.12.2025թ. | 0 | 0  | 0 | 0 | 0 | 0 | 0  |

|        |  |  |   |  |      |              |   |   |   |   |   |   |  |
|--------|--|--|---|--|------|--------------|---|---|---|---|---|---|--|
|        |  | գ. էլեկտրոնային առևտրի հսկողության գործիքակազմի ընդլայնում:  |   | Հսկողական աշխատանքների արդյունքում էլեկտրոնային առևտրով զբաղվող հարկ վճարողներին լրացուցիչ առաջադրված հարկային պարտավորությունների աճ՝ առնվազն 10 տոկոսով: | -10% |              |   |   |   |   |   |   |  |
| 2.1.14 | Ներդնել հարկային պարտավորություններ ի կատարումն ապահովող արգելադրման արդյունավետ գործիքակազմ | <p>ա. օրենսդրությամբ սահմանված՝ գույքի արգելանքի կիրառության հիմքերը հիմնավորելու (ապացուցելու) հարկային մարմնի պարտականության վերաբերյալ դրույթի վերանայման մասին առաջարկությունների ձևավորում և քննարկում՝ փոխարենը նախատեսելով գույքի արգելանքի կիրառում, եթե պարտավորությունը գանձելու վարույթ հարուցելու օրվան նախորդող 365 օրվա ընթացքում նշված հարկ վճարողի նկատմամբ հարուցված է եղել 200 հազար ՀՀ դրամը գերազանցող չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարույթ,</p> <p>բ. համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությունների հետագա ընթացքի ապահովում:</p> | Հարկային պարտավորություններ ի կատարումն ապահովող արգելադրման արդյունավետ գործիքակազմը ներդրված է: | Համապատասխան օրենսդրական փոփոխությունը կատարվել է՝ գույքի արգելանքի կիրառության հիմքերը վերանայվել են:   | 0    | 31.12.2025թ. | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |  |

|       |  |   |   |   |      |              |     |    |    |    |    |    |     |
|-------|--|---|---|---|------|--------------|-----|----|----|----|----|----|-----|
|       |  | <p>գ. տեխնիկական առաջադրանքի կազմում և ներկայացում ՊԵԿ Էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին,</p> <p>դ. համակարգի մշակում, ծրագրավորում,</p> <p>ե. համակարգի պիլոտային շահագործում,</p> <p>զ. համակարգի հանձնում շահագործման:</p>  |   |   |      |              |     |    |    |    |    |    |     |
| 2.2.1 | Կատարելագործել օրինապահ հարկ վճարողին հավաստագրի տրամադրման մեխանիզմները և տրամադրման գործընթացը | <p>ա. օրինապահ հարկ վճարողներին հավաստագրերի տրամադրման նոր կարգի, խրախուսման նոր մեխանիզմների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում,</p> <p>բ. օրինապահ հարկ վճարողներին հավաստագրերի տրամադրման մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություն և հետագա բարելավման մասով առաջարկությունների ներկայացում:</p> | Օրինապահ հարկ վճարողներին խրախուսման մեխանիզմները կատարելագործված են:                         | Օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ ստանալու համար դիմողների թիվն ավելացել է առնվազն 20 տոկոսով: | -20% | 31.03.2022թ. | -   | 7  |    |    |    |    | 7   |
| 2.2.2 | Ներդնել ֆիզիկական անձանց եկամուտների և ծախսերի ինքնահայտարարագրման ավտոմատացված համակարգ         | <p>ա. քիզնես գործընթացների ուսումնասիրություն, հնարավոր խնդիրների և ռիսկերի վերհանում,</p> <p>բ. համապատասխան իրավական ակտի մշակում, անհրաժեշտության դեպքում գործող օրենսդրության մեջ</p>   | Ֆիզիկական անձանց եկամուտների և ծախսերի ինքնահայտարարագրման ավտոմատացված համակարգը ներդրված է: | Համակարգից օգտվողների առնվազն 70 տոկոսը գոհ է համակարգից:                                     | -10% | 31.12.2025թ. | 120 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 160 |

|       |   |   |   |  |   |              |   |     |  |  |  |     |
|-------|---|---|---|--|---|--------------|---|-----|--|--|--|-----|
|       |   | <p>փոփոխությունների նախաձեռնում և հետագա ընթացքի ապահովում,</p> <p>գ. տեխնիկական նկարագրի կազմում,</p> <p>դ. տեխնիկական նկարագրի ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին և ԹՎայնացման խորհուրդ,</p> <p>ե. գնման գործընթացի կազմակերպում,</p> <p>զ. տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում,</p> <p>է. համակարգի մշակում, ծրագրավորում,</p> <p>ը. համակարգի պիլոտային շահագործում,</p> <p>թ. համակարգի հանձնում շահագործման:</p> |   |  |   |              |   |     |  |  |  |     |
| 2.2.3 | <p><u>Ներդրել միջազգային ստանդարտներին համապատասխան հարկային տեղեկությունների փոխանակման համակարգ<sup>3</sup></u></p> | <p>ա. ՏՀԶԿ կողմից կազմակերպվող փորձագիտական գնահատման գործընթացի համակարգում:</p> <p>բ. ՏՀԶԿ կողմից անցկացվելիք (Peer review) փորձագիտական գնահատման արդյունքներով պայմանավորված առաջարկությունների իրագործման ապահովում:</p>   | <p>Միջազգային համագործակցության շրջանակներում հարկային տեղեկությունների փոխանակման գործընթացը բարելավվել է:</p> | <p>ՏՀԶԿ-ի շրջանակներում անցկացվելիք փորձագիտական գնահատման արդյունքում ՊԵԿ-ը ստացել է «մեծամասամբ համապատասխանում է» գնահատական:</p> | 0 | 31.12.2022թ. | - | 50  |  |  |  | 50  |
| 2.2.4 | <p><u>Կատարելագործել տրանսֆերային գնագոյացման</u></p>   | <p>ա. տրանսֆերային գնագոյացման ստուգումների վերաբերյալ ուղեցույցի մշակում,</p>  | <p>Տրանսֆերային գնագոյացման ուղղությամբ իրականացվում է</p>  | <p>Մշակվել է տրանսֆերային գնագոյացման ստուգումների վերաբերյալ ուղեցույցը, մշակվել և ներդրվել է</p>                                   | 0 | 31.12.2022թ. | - | 150 |  |  |  | 150 |

|              |   |  |   |   |          |                     |           |           |  |  |  |            |
|--------------|---|--|---|---|----------|---------------------|-----------|-----------|--|--|--|------------|
|              | <p><u>ուղղությանը հարկային հսկողությունը</u><sup>4</sup></p>  | <p>բ. տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնող հարկային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների բարձրացման նպատակով վերապատրաստման միջոցառումների իրականացում,</p> <p>գ. տրանսֆերային գնագոյացման ռիսկերի վերհանման համակարգի մշակում և ներդրում,</p> <p>դ. տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնելու նպատակով համապատասխան առևտրային բազաներին անդամակցություն,</p> <p>ե. միջազգային ստանդարտներին համապատասխան՝ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման եռաստիճան համակարգի մշակում և ներդրում:</p> | <p>արդյունավետ հարկային հսկողություն:</p>   | <p>տրանսֆերային գնագոյացման ռիսկերի վերհանման համակարգ:<br/>Տրանսֆերային գնագոյացման ստուգումներ իրականացնելու նպատակով վերապատրաստված են առնվազն 10 հարկային ծառայողներ:<br/>Առկա է անդամակցություն առևտրային տվյալների բազաներին և ներդրվել է տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորման եռաստիճան համակարգը:</p> |          |                     |           |           |  |  |  |            |
| <p>2.2.5</p> | <p><u>Ներդրել ՏՀԶԿ «Հարկման բազայի խեղաթյուրման և շահույթների տեղաշարժ» (BEPS) ծրագրի՝ ՀՀ կողմից ստանձնած նվազագույն ստանդարտները (գործողությունները)</u><sup>5</sup></p> | <p>ա. ՀՀ-ի BEPS ծրագրի մեկնարկի նպատակով՝ ՏՀԶԿ փորձագետների Երևան այցի կազմակերպում և նրանց կողմից ՀՀ-ում կիրառվող կարգավորումների ու պրակտիկայի ուսումնասիրության անցկացման ապահովում,</p>  | <p>«վնասակար» հարկային պրակտիկայի (harmful tax practices) դեմ պայքարի մեխանիզմները ներդրված են:</p> | <p>Ընդունվել են՝<br/>1. «վնասակար» հարկային պրակտիկա որակող կարգավորումներ,<br/>2. կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառման շրջանակներում համաձայնագրային առևտուրը և հարկումից խուսափելը կանխարգելող</p>  | <p>0</p> | <p>31.12.2022թ.</p> | <p>75</p> | <p>75</p> |  |  |  | <p>150</p> |

|       |   |  |  |   |      |              |    |    |  |  |  |  |    |
|-------|---|--|--|---|------|--------------|----|----|--|--|--|--|----|
|       |   | <p>բ. BEPS ծրագրի նվազագույն ստանդարտների իրականացման աշխատանքների մասով ՀՀ-ի համար ճանապարհային քարտեզի մշակում,</p> <p>գ. ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների իրականացում:</p>  |  | <p>նոր կարգավորումներ,<br/>3. վեճերի կիրառման համար նախատեսված կարգավորումներ,<br/>4. ՏՀԶԿ Երկիր առ երկիր (Cbc)<br/>հաշվետվողականության ստանդարտի ներդրման համար անհրաժեշտ նախապայմաններ:</p> |      |              |    |    |  |  |  |  |    |
| 2.2.6 | <p>Կատարելագործել ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային ստվերի և հարկային պոտենցիալի գնահատման մոդելը, հնարավորության դեպքում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի օժանդակությամբ</p> | <p>ա. տնտեսության հարկունակ ոլորտներում հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատման մեկ միասնական մեթոդաբանության մշակում, որը կլինի ընդունելի և կիրառելի առնվազն հարկային քաղաքականության և վարչարարության ազդեցությունների գնահատման տեսանկյունից,</p> <p>բ. ընդունված մեթոդաբանության հիման վրա համապատասխան ծրագրային մոդուլի նախագծման (կատարելագործման) աշխատանքների իրականացում, որի միջոցով կիրականացվի հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատում:</p> | <p>Իրականացվում է տնտեսության հարկունակ ոլորտների հարկային պոտենցիալի, ստվերի և հարկային ճեղքի գնահատում՝ ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով:</p> | <p>Կազմվել է ըստ ոլորտների հարկային պոտենցիալի, ստվերի և ճեղքի գնահատականը:</p>   | 0    | 31.12.2022թ. | -  | 7  |  |  |  |  | 7  |
| 2.2.7 | <p>Ներդնել ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության</p>   | <p>ա. ապրանք տեղափոխող անձանց ռիսկերի չափանիշների կատարելագործում, նոր չափանիշների սահմանում,</p>  | <p>Իրականացվում է ԱՏԳ իրականացնող անձանց՝ ըստ ռիսկի մակարդակների դասակարգում և</p>   | <p>Մահմանված կարգով ռիսկի ցածր, միջին և բարձր մակարդակների դասակարգված ստուգման ենթակա անձանց առնվազն</p>   | -20% | 31.12.2025թ. | 45 | 45 |  |  |  |  | 90 |

|  |  |  |   |  |  |  |  |  |  |
|--|--|--|---|--|--|--|--|--|--|
| <p>շրջանակներում արտաքին առևտրի աջակցման ու թիրախային ստուգումների արդի համակարգ</p> | <p>բ. ապրանք տեղափոխող անձանց դիսկերի չափանիշների հիման վրա ծրագրային ապահովման մշակման նպատակով տեխնիկական նկարագրի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման խորհրդին,</p> | <p>թիրախային հետբացթողումային հսկողություն: Բարձրացել է ԱՏԳ իրականացնող անձանց կարգապահության մակարդակը:</p> | <p>60 տոկոսի նկատմամբ կիրառվել է ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն:</p> |  |  |  |  |  |  |
|  | <p>գ. տեխնիկական առաջադրանքի հիման վրա համապատասխան ծրագրային ապահովման մշակում և ներդրում,</p>  |  |   |  |  |  |  |  |  |
|  | <p>դ. ապրանքների բացթողումից հետո իրականացվող համակարգային ստուգումների ներդրում և համակարգային ստուգումների անցկացման ընթացակարգերի մասով ուսուցում,</p>  |  |   |  |  |  |  |  |  |
|  | <p>ե. բարեխիղճ ԱՏԳ իրականացնող անձանց համար արտոնությունների և պարզեցումների սահմանում,</p>  |  |   |  |  |  |  |  |  |
|  | <p>զ. արտաքին առևտրի իրականացման տեսանկյունից դիսկալնության բարձր մակարդակ ունեցող արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ թիրախային ստուգումների մեխանիզմի ներդրում՝ նշված անձանց</p>               |  |   |  |  |  |  |  |  |

|       |  |   |   |  |      |              |     |     |     |  |  |     |
|-------|--|---|---|--|------|--------------|-----|-----|-----|--|--|-----|
|       |  | օրինապահության մակարդակը բարձրացնելու նպատակով,   |   |  |      |              |     |     |     |  |  |     |
|       |  | է. տարեկան կամ կիսամյակային կտրվածքով ստուգման պլանի նախագծում և հաստատում:   |   |  |      |              |     |     |     |  |  |     |
| 2.2.8 | <p>Մաքսային մարմինների կողմից նախքան ապրանքների բացթողումը իրականացվող մաքսային հսկողության ձևերի ու մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոցների ծավալների կրճատմանը զուգահեռ ընդլայնել ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության (հետբացթողումային հսկողության) գործառնություններ իրականացնող ստորաբաժանման (ստորաբաժանումների) կարողությունները՝ ավտոմատացնելով ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության գործընթացները</p> | <p>ա. ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողության ավտոմատացումն ապահովող ծրագրային ապահովման միջոցների մշակման նպատակով իրականացվող բիզնես գործընթացների գույքագրում,</p> <p>բ. իրավական ակտերի ուսումնասիրություն, ըստ անհրաժեշտության՝ համապատասխան փոփոխությունների և լրացումների իրականացման մասով առաջարկությունների մշակում և հետագա ընթացքի ապահովում,</p> <p>գ. ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության ավտոմատացնող ծրագրային ապահովման մշակման նպատակով տեխնիկական նկարագրի կազմում և ներկայացում ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման և</p> | <p>Բարձրացել է ստուգումների արդյունավետությունը և վերահսկելիությունը, իսկ արդյունքները դարձել են հիմնավորված:</p> | <p>Մահմանված կարգով ռիսկի ցածր, միջին և բարձր մակարդակների դասակարգված ստուգման ենթակա անձանց առնվազն 60 տոկոսի նկատմամբ կիրառվել է ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն:</p> | -20% | 31.12.2025թ. | 150 | 100 | 100 |  |  | 350 |



|  |  |  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|
|  |  | <p>կատարելագործման խորհրդին,</p> <p>դ. ապրանքների բացթողումից հետո իրականացվող հսկողության աշխատանքներն ավտոմատացնող ծրագրային ապահովման միջոցների նախագծում և ներդրում,</p> <p>ե. «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» հայտարարագրման համակարգի հիման վրա արդեն գործող գործարքների առցանց ընտրության նպատակով ռիսկային չափանիշների պարբերաբար վերանայում, նոր առավել թիրախային չափանիշների մշակում և ներդրում,</p> <p>զ. մաքսային հսկողության գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների ծառայողների թվաքանակի օպտիմալացում՝ կապված ծանրաբեռնվածության աստիճանական նվազման և շեշտադրման փոփոխության հետ և դրան զուգահեռ բացթողումից հետո մաքսային հսկողության գործառույթներ իրականացնող ծառայողների թվաքանակի ավելացում:</p> |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|

|              |  |  |   |   |          |                     |            |            |            |  |  |            |
|--------------|--|--|---|---|----------|---------------------|------------|------------|------------|--|--|------------|
| <p>2.2.9</p> | <p>«Մաքսային հսկողության շեշտադրման տեղափոխումը նախաբացթողումային փուլից հետբացթողումային փուլ» թեմայով տեխնիկական սջակցության որևէ ծրագրի իրականացում միջազգային համագործակցության շրջանակներում միջազգային փորձագետների (mid-term and long-term) ներգրավմամբ<sup>6</sup></p> | <p>ա. ստուգման ենթակա ԱՏԳ իրականացնող անձանց դասակարգում՝ ըստ ռիսկայնության աստիճանի, մաքսային մարմիններին վճարման ենթակա վճարների ծավալի, տեղափոխվող ապրանքների ընդհանուր արժեքի, այդ նպատակով համապատասխան ընթացակարգի մշակում,</p> <p>բ. ռիսկի ցածր մակարդակ ունեցող ընկերություններին պարզեցված ընթացակարգերի կիրառման հնարավորություն տվող կարգավիճակի տրամադրման նպատակով այդ ընկերությունների նկատմամբ ստուգումների իրականացում՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին նշված անձանց համապատասխանությունը, ինչպես նաև վերջիններիս գործունեության իրականացման իրավաչափության մակարդակը որոշելու համար,</p> <p>գ. ռիսկի բարձր և միջին մակարդակներ ունեցող ընկերությունների (informal traders) թիրախավորում, ռիսկայնության աստիճանի իջեցմանն ուղղված հսկողական աշխատանքների իրականացում,</p> | <p>Հետբացթողումային գործընթացների բարելավման ծրագիրն իրականացվել է:</p> | <p>Մշակվել է՝<br/>ա. հետբացթողումային հսկողության գործողությունների ուղեցույց-ձեռնարկ,<br/>բ. ստուգման ենթակա ԱՏԳ իրականացնող անձանց դասակարգման իրականացումը կարգավորող ընթացակարգ,<br/>գ. մշակվում են մաքսային ստուգման տարեկան (կիսամյակային) պլաններ:</p> | <p>0</p> | <p>31.12.2025թ.</p> | <p>125</p> | <p>250</p> | <p>125</p> |  |  | <p>500</p> |
|--------------|--|--|---|---|----------|---------------------|------------|------------|------------|--|--|------------|

|  |  |  |  |  |             |  |  |  |  |
|--|--|--|--|--|-------------|--|--|--|--|
|  |  | <p>դ. ապրանքների բացթողումից հետո իրականացվող հսկողության շրջանակներում գործարքի վրա հիմնված ստուգումների քանակի աստիճանական նվազմանը զուգահեռ համակարգային ստուգումների քանակի աճ,</p> <p>ե. ռիսկի աստիճանի նվազեցման և համապատասխանության վերհանման նպատակով կազմակերպվող համակարգային ստուգումների իրականացման նպատակով ստուգման պլանի մշակում, կազմում և պլանային ստուգումների իրականացում, դրա համար համապատասխան ընթացակարգերի մշակում և ներդրում,</p> <p>զ. արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց գնահատման արդյունքում ձևավորված գնահատականի կշիռը վերլուծելու, հետագա վերլուծության ենթակա արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց ընտրելու և վերջիններիս նկատմամբ ստուգում իրականացնելու նպատակով զարգացած և առաջավոր փորձ ունեցող երկրներում կիրառվող իրավական մեխանիզմների և</p> |  | <p>Մահմանված կարգով ռիսկի ցածր, միջին և բարձր մակարդակների դասակարգված ստուգման ենթակա անձանց առնվազն 60 տոկոսի նկատմամբ կիրառվել է ապրանքների բացթողումից հետո մաքսային հսկողություն:</p> | <p>-20%</p> |  |  |  |  |
|--|--|--|--|--|-------------|--|--|--|--|

|  |  |   |  |  |  |  |  |  |  |
|--|--|---|--|--|--|--|--|--|--|
